**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

# Հ Ր Ա Մ Ա Ն

«02» «փետրվարի» 2026 թվական № 45-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով, առաջին փոխվարչապետի 2018 թվականի հուլիսի 31-ի N 29-Ն որոշման հավելվածի 4-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2026 թվականի հունվարի 29-ի N 42/45.45/2341 գրությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Հրամանով հաստատված 304-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.5-Ղ3-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«1.2. Ենթակա և հաշվետու է»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«**1.2. Ենթակա և հաշվետու է**

Բաժնի պետը հաշվետու և անմիջական ենթակա է Նախարարին, անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:»:

2) Հրամանով հաստատված 313-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետի (ծածկագիր՝ 15-32.2-Ղ3-2) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը»**

**գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

## 2. Պաշտոնի բնութագիրը

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1) ապահովում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման ու վերարտադրության, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված, ներառյալ՝ հարմարվողականության, ոլորտի քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման գործընթացը և վերլուծական աշխատանքները,

2) ապահովում է շրջակա միջավայրի ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, վերլուծական աշխատանքները՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով,

3) ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման աշխատանքները,

4) ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի շրջակա միջավայրի ոլորտի միջոցառումների սահմանված կարգով մշակման և իրականացման գործընթացները և վերլուծության աշխատանքները,

5) ապահովում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ շրջակա միջավայրին վերաբերող բաժինների, ռազմավարական ուղղությունների մշակման աշխատանքները,

6) ապահովում է ռազմավարական ծրագրերի իրականացումն ապահովող միջոցառումների կատարման գծով (մասով) Նախարարության ստորաբաժանումներից, ենթակա կազմակերպություններից ու հիմնարկներից ստացված տեղեկատվության, միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա սահմանված կարգով պատկան մարմիններ ներկայացվող հաշվետվությունների, ամփոփագրերի, զեկույցների և տեղեկանքների կազմման (նախապատրաստման) և տրամադրման գործընթացը,

7) ապահովում է Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքների գնահատումը և մոնիթորինգի իրականացումը,

8) ապահովում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացը,

9) ապահովում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացին մասնակցությունը,

10) ապահովում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը,

11) համակարգում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման և այդ ծրագրերի ամփոփման գործընթացը,

12) ապահովում է շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) օգտագործման ու վերարտադրության տնտեսական մեխանիզմների և գործիքակազմի մշակման աշխատանքների իրականացումը,

13) ապահովում է շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների և բնապահպանական պատասխանատվության մեխանիզմների մշակման աշխատանքների իրականացումը,

14) ապահովում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակումն ու իրականացումը՝ Նախարարության իրավասությունների շրջանակում,

15) ապահովում է տնտեսության մեջ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման խթանման քաղաքականության մշակման ու իրականացման աշխատանքները՝ Վարչության իրավասությունների շրջանակում,

16) ապահովում է բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը նպաստող բնօգտագործման համայնքահեն սկզբունքների և տնտեսական գործիքների ներդրման գծով առաջարկությունների մշակման աշխատանքների իրականացումը,

17) ապահովում է բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների (մեթոդաբանության) վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքների իրականացումը,

18) ապահովում է շրջակա միջավայրի ծրագրերի մշակման և իրականացման ընթացակարգերի, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ծախսերի կառավարման լավագույն (արդիական) համակարգերի ներդրման գծով առաջարկների մշակման աշխատանքների իրականացումը,

19) ապահովում է շրջակա միջավայրի ծրագրերի և ծախսերի ֆինանսավորման (ներառյալ՝ ապահովագրական, հասցեական օգտագործման և այլ հիմնադրամների միջոցով, բնապահպանական միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով նախատեսված) մեխանիզմների ներդրման գծով առաջարկությունների մշակման աշխատանքների իրականացումը,

20) ապահովում է բնապահպանական միջոցառումների, բնապահպանական տնտեսական մեխանիզմների, բնապահպանական հարկավորման և ազդեցությունների տնտեսագիտական գնահատման գծով վերլուծական աշխատանքների իրականացումը,

21) ապահովում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ծախսերի հաշվարկման և դասակարգման, տեղեկատվության պարբերական հավաքագրման համակարգի ներդրման և կատարելագործման գծով առաջարկների մշակման աշխատանքների իրականացումը,

22) ապահովում է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների, ինչպես նաև ոչ հարկային եկամուտների մասով փաստացի մուտքերի վերաբերյալ տեղեկատվության ապահովման և վերլուծության աշխատանքների իրականացումը,

23) ապահովում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի վիճակագրական զեկույցների տնտեսագիտական և ֆինանսական բաղադրիչների (բաժինների) նախագծերի նախապատրաստումը,

24) ապահովում է Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ ռազմավարական փաստաթղթերի տնտեսագիտական վերլուծության իրականացումը,

25) ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունների համաձայնեցման գործընթացը,

26)ապահովում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքների համակարգումը և եզրակացությունների տրամադրման գործընթացը,

27) ապահովում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական նախագծերի մշակումը,

28) ապահովում է էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների մշակումն ու իրականացումը,

29)ապահովում է շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ հանրամատչելի ուսումնադաստիարակչական նյութերի մշակման աշխատանքները,

30) ապահովում է կրթական համակարգում և այլ հաստատություններում էկոլոգիական ուղղվածություն ունեցող և կրթադաստիարակչական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները,

31) ապահովում է Վարչության իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացը,

32)ապահովում է այլ մարմինների կողմից մշակված և նախարարություն համաձայնեցման ներկայացված, Նախարարության այլ ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների տրամադրման գործընթացը՝ Վարչության իրավասությունների շրջանակներում,

33)ապահովում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրության և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմման գործընթացը:

**Իրավունքները՝**

- կազմակերպել քննարկումներ, ժողովներ, խորհրդակցություններ, հավաքագրել տեսակետներ, ստանալ վարչության աշխատակիցների և այլ մասնագետների մասնագիտական կարծիքներ, ներկայացնել առաջարկություններ՝ շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում

պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրերի մշակման, կազմման, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, ստացման և ամփոփման նպատակով,

- պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և ամփոփման աշխատանքների իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման վերաբերյալ,
- պահանջել և ստանալ տեղեկատվություն Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերի արդյունքների վերաբերյալ՝ ապահովելով վերջնական գնահատում և մոնիթորինգ,
- պահանջել և ստանալ տեղեկատվություն Նախարարության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման ապահովման նպատակով,
- քննարկել վերադասի հետ և ներկայացնել առաջարկություններ կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման և շահագրգիռ պետական մարմինների հետ համագործակցության վերաբերյալ,
- Նախարարի համաձայնեցմանը ներկայացնել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի շրջանակներում ազդակիր համայնքների կողմից ներկայացված բնապահպանական ծրագրերի Նախարարության համապատասխան ստորաբաժանումների դիրքորոշումների հիման վրա ամփոփված տարբերակը,
- ըստ անհրաժեշտության պահանջել և ստանալ առաջարկություններ շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների օգտագործման ու վերարտադրության տնտեսական մեխանիզմների և գործիքակազմի, շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների և բնապահպանական պատասխանատվության մեխանիզմների մշակման գործընթացի ապահովման նպատակով,
- վերադասի հետ քննարկել Վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների (մեթոդաբանության) մշակման և կատարելագործման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունները,
- պահանջել և ստանալ տեղեկատվություն բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների, ինչպես նաև ոչ հարկային եկամուտների մասով փաստացի մուտքերի վերաբերյալ,
- Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստանալ դիրքորոշում՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքների կազմակերպման նպատակով,
- վերադասի քննարկմանը ներկայացնել էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների մշակման, հանրամատչելի ուսումնադաստիարակչական նյութերի, էկոլոգիական ուղղվածություն

ունեցող և կրթադաստիարակչական ծրագրերի վերաբերյալ Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ քննարկված առաջարկությունները,

- Նախարարության ստորաբաժանումներից ստանալ տեղեկատվություն հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև նոր կազմվող հակակոռուպցիոն ծրագրերի ոլորտին վերաբերող մասերի մշակման վերաբերյալ,
- կազմակերպել քննարկումներ Վարչության կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի վերաբերյալ,
- համագործակցել պետական և ոչ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ՝ Վարչության գործառույթներից բխող պարտավորությունների ապահովման նպատակով,
- ստանալ Նախարարության ստորաբաժանումներից, այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- Վարչության գործառույթներին առնչվող դիմումների շուրջ ըստ անհրաժեշտության կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, քննարկել ներկայացված հարցերը, խնդիրները, առաջարկությունները,
- գնահատել Վարչության ինստիտուցիոնալ կարողությունները և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար,
- կազմակերպել խորհրդակցություններ՝ ելնելով քննարկվող թեմայի բնույթից՝ մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների:

**Պարտականությունները՝**

- մշակել Վարչությանը վերապահված ոլորտի քաղաքականություններ, ռազմավարություններ, ծրագրեր, ոլորտի իրավական ակտեր, ուսումնասիրել և վերլուծել դրանց մշակման և իրականացման աշխատանքները, ներկայացնել առաջարկություններ և զեկուցել դրանց կատարման ընթացքի վերաբերյալ,
- ամփոփել և վերլուծել շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրերի նախագծերի վերաբերյալ ստացված նյութերն ու տեղեկանքները,
- ամփոփել և կազմել հաշվետվություններ բնագավառի պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման ընթացքի վերաբերյալ և ներկայացնել վերադասի քննարկմանը,
- ամփոփել և վերլուծել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ բնապահպանության ոլորտին վերաբերող բաժինների կազմման վերաբերյալ

ստորաբաժանումներից ստացված տեղեկատվությունը, մշակել համապատասխան բաժինների նախագծերը և ներկայացնել վերադասի քննարկմանը,

- ամփոփել և վերլուծել Վարչության կողմից իրականացված շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման և վերականգնման տնտեսական մեխանիզմների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի ու կանոնների խախտման հետևանքով պետությանը հասցված վնասի  հաշվարկման մեթոդների մշակման ու հասցված վնասի հաշվարկման գործընթացի հետ կապված աշխատանքները, ձևավորել Վարչության վերջնական առաջարկությունը և ներկայացնել վերադասի քննարկմանը,
- կազմակերպել ոլորտի պետական ծրագրերի մշակման համար անհրաժեշտ տվյալների և նյութերի հավաքագրման, ծրագրերի մշակման և դրանց նախագծերի կազմման աշխատանքների բնականոն իրականացումը,
- ամփոփել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պետական բյուջետային ծրագրերի ոչ ֆինանսական արդյունքային կատարողական ցուցանիշների մշակման աշխատանքները,
- ամփոփել և վերլուծել հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացման վերաբերյալ ստորաբաժանումներից հավաքագրված տեղեկատվությունը, մշակել նոր կազմվող ծրագրերի ոլորտին վերաբերող մասերի նախագծերը և ամփոփ արդյունքները ներկայացնել վերադասի քննարկմանը,
- ամփոփել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստման, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցերի մշակման աշխատանքները և նախարարի և համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալի քննարկմանը ներկայացնել վերջնական տարբերակները,
- ուսումնասիրել և վերլուծել պետական և ոչ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքները՝ շրջակա միջավայրի պահպանության ոլորտի իրավական ակտերի վերլուծության, նախագծերի, մեթոդների և ուղեցույցների կազմման նպատակով,
- ուսումնասիրել տարբեր հնարավոր տեղեկատվական աղբյուրներից ոլորտի համադրելի երկրների միջազգային փորձի, ոլորտի գիտական և գործնական փորձի ուսումնասիրության արդյունքները,
- մշակել և վերադասի քննարկմանը ներկայացնել ոլորտի քաղաքականության զարգացման նոր ուղղությունները,
- քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին զեկուցել գլխավոր քարտուղարին,
- ամփոփել և վերլուծել այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից ստացված Վարչության առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված տեղեկատվությունն ու անհրաժեշտ նյութերը,

- վերլուծել ստացված տեղեկատվության և նյութերի նպատակային կիրառումը, ստուգել կազմված փաստաթղթերի ճշտությունը և համապատասխան տեղեկատվության հավաստիությունը,
- հետևել Վարչության լիազորությունների շրջանակներում առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի և այլ գրությունների նախագծերի կազմման աշխատանքների բնականոն ընթացքին,
- ուսումնասիրել Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերը, կազմել դրանց վերաբերյալ տեղեկանքներ և զեկուցել վերադասին,
- կազմել Վարչության աշխատանքային ծրագրերը ու Վարչության կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները:

3) Հրամանով հաստատված 314-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 15-32.2-Ղ4-3) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլխի **«2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1) համակարգում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման ու վերարտադրության, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված, ներառյալ՝ հարմարվողականության, ոլորտի քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման գործընթացը և վերլուծական աշխատանքները,

2) համակարգում է շրջակա միջավայրի ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, վերլուծական աշխատանքները՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով,

3) համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման աշխատանքները,

4) համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի շրջակա միջավայրի ոլորտի միջոցառումների սահմանված կարգով մշակման և իրականացման գործընթացները և վերլուծության աշխատանքները,

5) համակարգում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի' շրջակա միջավայրին վերաբերող բաժինների, ռազմավարական ուղղությունների մշակման աշխատանքները,

6) համակարգում է ռազմավարական ծրագրերի իրականացումն ապահովող միջոցառումների կատարման գծով (մասով) Նախարարության ստորաբաժանումներից, ենթակա կազմակերպություններից ու հիմնարկներից ստացված տեղեկատվության, միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա սահմանված կարգով պատկան մարմիններ ներկայացվող հաշվետվությունների, ամփոփագրերի, զեկույցների և տեղեկանքների կազմման (նախապատրաստման) և տրամադրման գործընթացը,

7) համակարգում է Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքների գնահատումը և մոնիթորինգի իրականացումը,

8) համակարգում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման գործընթացը,

9) համակարգում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացին մասնակցությունը,

10) համակարգում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը,

11) համակարգում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման և այդ ծրագրերի ամփոփման գործընթացը,

12) համակարգում է շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) օգտագործման ու վերարտադրության տնտեսական մեխանիզմների և գործիքակազմի մշակման աշխատանքները,

13) համակարգում է շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների և բնապահպանական պատասխանատվության մեխանիզմների մշակման աշխատանքները,

14) համակարգում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակմանն ուղղված աշխատանքները՝ Նախարարության իրավասությունների շրջանակում,

15) համակարգում է տնտեսության մեջ շրջակա միջավայրի պահպանության տեսանկյունից լավագույն հասանելի տեխնոլոգիաների օգտագործման խթանման քաղաքականության մշակման ու իրականացման աշխատանքները՝ Վարչության իրավասությունների շրջանակում,

16) համակարգում է բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը նպաստող բնօգտագործման համայնքահեն սկզբունքների և տնտեսական գործիքների ներդրման գծով առաջարկությունների մշակման աշխատանքները,

17) համակարգում է բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների (մեթոդաբանության) վերաբերյալ առաջարկների մշակման աշխատանքները,

18) համակարգում է շրջակա միջավայրի ծրագրերի մշակման և իրականացման ընթացակարգերի, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ծախսերի կառավարման

լավագույն (արդիական) համակարգերի ներդրման գծով առաջարկների մշակման աշխատանքները,

19) համակարգում է շրջակա միջավայրի ծրագրերի և ծախսերի ֆինանսավորման (ներառյալ՝ ապահովագրական, հասցեական օգտագործման և այլ հիմնադրամների միջոցով, բնապահպանական միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով նախատեսված) մեխանիզմների ներդրման գծով առաջարկությունների մշակման աշխատանքները,

20)համակարգում է բնապահպանական միջոցառումների, բնապահպանական տնտեսական մեխանիզմների, բնապահպանական հարկավորման և ազդեցությունների տնտեսագիտական գնահատման գծով վերլուծական աշխատանքները,

21) համակարգում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ծախսերի հաշվարկման և դասակարգման, տեղեկատվության պարբերական հավաքագրման համակարգի ներդրման և կատարելագործման գծով առաջարկների մշակման աշխատանքները,

22) համակարգում է բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների, ինչպես նաև ոչ հարկային եկամուտների մասով փաստացի մուտքերի վերաբերյալ տեղեկատվության ապահովման և վերլուծության իրականացման աշխատանքները,

23) համակարգում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի վիճակագրական զեկույցների տնտեսագիտական և ֆինանսական բաղադրիչների (բաժինների) նախագծերի նախապատրաստումը,

24) համակարգում է Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ ռազմավարական փաստաթղթերի տնտեսագիտական վերլուծության իրականացումը,

25) համակարգում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունների համաձայնեցման գործընթացը,

26)համակարգում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները և եզրակացությունների տրամադրման գործընթացը,

27) համակարգում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական նախագծերի մշակումը,

28) համակարգում է էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների մշակումն ու իրականացումը,

29) համակարգում է Վարչության իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակման գործընթացը,

30) համակարգում է այլ մարմինների կողմից մշակված և նախարարություն համաձայնեցման ներկայացված, Նախարարության այլ ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների տրամադրման գործընթացը՝ Վարչության իրավասությունների շրջանակներում,

31) համակարգում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրության և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմման գործընթացը:

**Իրավունքները՝**

- կազմակերպել քննարկումներ, ժողովներ, խորհրդակցություններ, հավաքագրել տեսակետներ, ստանալ վարչության աշխատակիցների և այլ մասնագետների մասնագիտական կարծիքներ, ներկայացնել առաջարկություններ՝ շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրերի մշակման, կազմման, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, ստացման և ամփոփման նպատակով,
- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և ամփոփման աշխատանքների իրականացման, Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման վերաբերյալ,
- ստանալ տեղեկատվություն Նախարարության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմման ապահովման նպատակով,
- Վարչության պետի քննարկմանը ներկայացնել առաջարկություններ կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման և շահագրգիռ պետական մարմինների հետ համագործակցության վերաբերյալ,
- Վարչության պետին ներկայացնել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի շրջանակներում ազդակիր համայնքների կողմից ներկայացված բնապահպանական ծրագրերի Նախարարության համապատասխան ստորաբաժանումների դիրքորոշումների հիման վրա ամփոփված տարբերակը,
- ըստ անհրաժեշտության ստանալ առաջարկություններ շրջակա միջավայրի պահպանության և բնական պաշարների օգտագործման ու վերարտադրության տնտեսական մեխանիզմների և գործիքակազմի, շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկման մեթոդների և բնապահպանական պատասխանատվության մեխանիզմների մշակման գործընթացի ապահովման նպատակով,
- Վարչության պետի հետ քննարկել իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների (մեթոդաբանության) մշակման և կատարելագործման ուղղությունների վերաբերյալ առաջարկությունները,
- ստանալ տեղեկատվություն բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների վերաբերյալ,
- Նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստանալ դիրքորոշում՝ նորմատիվ իրավական ակտերի նախագծերի շրջակա միջավայրի

բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքների կազմակերպման նպատակով,

- Վարչության պետի հանձնարարությամբ կազմակերպել քննարկումներ Վարչության կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի վերաբերյալ,
- համագործակցել պետական և ոչ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների հետ՝ Վարչության գործառույթներից բխող պարտավորությունների ապահովման նպատակով,
- ստանալ նախարարության ստորաբաժանումներից, այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր,
- ներկայացնել առաջարկություններ Վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր կազմավորելու համար,
- Վարչության գործառույթներին առնչվող դիմումների շուրջ՝ ըստ անհրաժեշտության կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, քննարկել ներկայացված հարցերը, խնդիրները, առաջարկությունները,
- կազմակերպել խորհրդակցություններ՝ ելնելով քննարկվող թեմայի բնույթից՝ մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների,
- մշակել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել իր համակարգման բնագավառում հարցերի և խնդիրների լուծմանն ուղղված առաջարկություններ:

**Պարտականությունները՝**

- մշակել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել շրջակա միջավայրի պահպանության և բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման և վերականգնման տնտեսական մեխանիզմների, այդ թվում՝ բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների (հարկերի) հաշվարկման և վճարման հարցերը կարգավորող իրավական դաշտի կատարելագործման և ընդլայնման, դրանց տնտեսապես և էկոլոգիապես հիմնավորված դրույքաչափերի գծով առաջարկությունները,
- կազմել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել համապատասխան իրավական ակտերի, առաջարկությունների և այլ գրությունների նախագծեր,
- ամփոփել և վերլուծել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերի ու կանոնների խախտման հետևանքով պետությանը հասցված վնասի հաշվարկման մեթոդների մշակման ու հասցված վնասի հաշվարկման վերաբերյալ ստացված առաջարկությունները,
- կազմել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել բնապահպանական տնտեսական գործիքների կիրառման միջոցով լավագույն՝ բնապահպանական

տեսակետից անվտանգ և ռեսուրսախնայող տեխնոլոգիաների խթանման գծով առաջարկություններ,

- ամփոփել բնական ռեսուրսների կայուն օգտագործմանը նպաստող բնօգտագործման համայնքահեն սկզբունքների և տնտեսական գործիքների ներդրման գծով առաջարկությունները,
- վերլուծել բնապահպանական ծախսերի, բնապահպանական սուբսիդիաների (աջակցության) գործընթացները,
- ամփոփել և կազմել բնական ռեսուրսների տնտեսական գնահատման մեթոդների (մեթոդիկաների) վերաբերյալ առաջարկները,
- վերլուծել բնապահպանական ծրագրերի և ծախսերի ֆինանսավորման մեխանիզմները,
- քաղաքացիների ընդունելության արդյունքների մասին զեկուցել Վարչության պետին,
- Վարչության պետի քնարկմանը ներկայացնել բնապահպանական ծրագրերի և ծախսերի ֆինանսավորման մեխանիզմների ներդրման վերաբերյալ առաջարկությունների նախագծերը, կատարել բնապահպանական ծախսերի հաշվարկման և դասակարգման, տեղեկատվության պարբերական հավաքագրման համակարգի ներդրման վերլուծության աշխատանքներ,
- կազմել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել բնապահպանական ծախսերի հաշվարկման և դասակարգման, տեղեկատվության պարբերական հավաքագրման համակարգի ներդրման վերաբերյալ առաջարկությունների նախագծերը,
- ամփոփել բնապահպանական և բնօգտագործման վճարների (հարկերի), ոչ հարկային եկամուտների գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների կանխատեսումային ծավալների հաշվարկման, պլանավորման և վերլուծության աշխատանքները և Վարչության պետի քնարկմանը ներկայացնել դրանց վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը,
- ամփոփել համաձայն Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի բնության և շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի, ինչպես նաև մշտադիտարկումների փաստացի մուտքերի վերաբերյալ աշխատանքներն՝ Վարչության իրավասությունների շրջանակներում,
- ամփոփել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պետական բյուջետային ծրագրերի ոչ ֆինանսական արդյունքային կատարողական ցուցանիշների մշակման աշխատանքները և ներկայացնել Վարչության պետին,
- Վարչության պետի հաստատմանը ներկայացնել իր համակարգման բնագավառի աշխատանքային ծրագրերը,
- հետևել իր լիազորությունների շրջանակներում առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի և այլ գրությունների նախագծերի կազմման աշխատանքների բնականոն ընթացքին,
- ուսումնասիրել Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերը, ըստ անհրաժեշտության կազմել դրանց վերաբերյալ տեղեկանքներ և զեկուցել Վարչության պետին,

| |
|---|
| • կազմել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները: |

4) Հրամանով հաստատված 315-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.2-Մ2-5) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման ու վերարտադրության, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված, ներառյալ՝ հարմարվողականության, ոլորտի քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման գործընթացը և վերլուծական աշխատանքները,

2) իրականացնում է շրջակա միջավայրի ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, վերլուծական աշխատանքները՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով,

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման աշխատանքները,

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի շրջակա միջավայրի ոլորտի միջոցառումների սահմանված կարգով մշակման և իրականացման գործընթացները և վերլուծության աշխատանքները,

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ շրջակա միջավայրին վերաբերող բաժինների, ռազմավարական ուղղությունների մշակման աշխատանքները,

6) իրականացնում է ռազմավարական ծրագրերի իրականացումն ապահովող միջոցառումների կատարման գծով (մասով) Նախարարության ստորաբաժանումներից, ենթակա կազմակերպություններից ու հիմնարկներից ստացված տեղեկատվության, միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա սահմանված կարգով պատկան մարմիններ ներկայացվող հաշվետվությունների, ամփոփագրերի, զեկույցների և տեղեկանքների կազմման (նախապատրաստման) և տրամադրման գործընթացը,

7) իրականացնում է Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքների գնահատումը և մոնիթորինգը,

8) իրականացնում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմումը,

9) մասնակցում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացին,

10) իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը,

11) իրականացնում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման և այդ ծրագրերի ամփոփման աշխատանքները,

12) իրականացնում է շրջակա միջավայրի ծրագրերի մշակման և իրականացման ընթացակարգերի, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ծախսերի կառավարման լավագույն (արդիական) համակարգերի ներդրման գծով առաջարկների մշակման աշխատանքները,

13) իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի վիճակագրական զեկույցների տնտեսագիտական և ֆինանսական բաղադրիչների (բաժինների) նախագծերի նախապատրաստումը,

14) իրականացնում է Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ ռազմավարական փաստաթղթերի տնտեսագիտական վերլուծություն,

15) իրականացնում է էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների մշակման գործընթացը,

16) իրականացնում է շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ հանրամատչելի ուսումնադաստիարակչական նյութերի մշակման աշխատանքները,

17) իրականացնում է կրթական համակարգում և այլ հաստատություններում էկոլոգիական ուղղվածություն ունեցող և կրթադաստիարակչական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները,

18) իրականացնում է Վարչության իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակում,

19) իրականացնում է այլ մարմինների կողմից մշակված և նախարարություն համաձայնեցման ներկայացված, Նախարարության այլ ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների կազմում՝ Վարչության իրավասությունների շրջանակներում,

20) մասնակցում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման աշխատանքներին՝ Նախարարության իրավասությունների շրջանակում,

21) մասնակցում է շրջակա միջավայրի ծրագրերի և ծախսերի ֆինանսավորման (ներառյալ՝ ապահովագրական, հասցեական օգտագործման և այլ հիմնադրամների

միջոցով, բնապահպանական միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով նախատեսված) մեխանիզմների ներդրման գծով առաջարկությունների մշակման աշխատանքներին,

22) մասնակցում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ծախսերի հաշվարկման և դասակարգման, տեղեկատվության պարբերական հավաքագրման համակարգի ներդրման և կատարելագործման գծով առաջարկների մշակման աշխատանքներին,

23) իրականացնում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքների համակարգման և եզրակացությունների տրամադրման գործընթացը,

24) մասնակցում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական նախագծերի մշակման աշխատանքներին:

**Իրավունքները՝**

- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման վերաբերյալ,
- ստանալ տեղեկատվություն Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերի արդյունքների, ինչպես նաև տարեկան և ընթացիկ գործունեության վերաբերյալ,
- կազմել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել իր գործառույթներից բխող շրջակա միջավայրի պահպանության ոլորտի քաղաքականությանն ուղղված մշակված իրավական ակտերի նախագծերը,
- Վարչության պետին տրամադրել և քննարկել էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների մշակման, հանրամատչելի ուսումնադաստիարակչական նյութերի, էկոլոգիական ուղղվածություն ունեցող և կրթադաստիարակչական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունները,
- Նախարարության ստորաբաժանումներից ստանալ տեղեկատվություն հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև նոր կազմվող հակակոռուպցիոն ծրագրերի ոլորտին վերաբերող մասերի մշակման վերաբերյալ,
- մասնակցել Վարչության կողմից կազմակերպվող աշխատանքային քննարկումներին և խորհրդակցություններին,
- աշխատանքային կարգով քննարկել իր լիազորությունների շրջանակներում Վարչության գործառույթներից բխող հարցերն ու խնդիրները շահագրգիռ կողմերի հետ,
- Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ իր գործառույթներից բխող աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու վերաբերյալ:

**Պարտականությունները՝**

- ամփոփել և վերլուծել շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրերի մշակման, կազմման, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման աշխատանքները,
- վերլուծել բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և ամփոփման աշխատանքները, իրականացնել արդյունքների գնահատում,
- մշակել Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինները, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը,
- մշակել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ շրջակա միջավայրին վերաբերող բաժինները, ռազմավարական ուղղությունները,
- վերլուծել ոլորտի պետական ծրագրերի մշակման և նախագծերի կազմման համար ստացված անհրաժեշտ տվյալներն և նյութերը,
- վերլուծել և ամփոփել իր գործառույթներին առնչվող ոլորտների միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները՝ հավաքագրելով հասանելի բոլոր աղբյուրներից,
- գնահատել Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերի իրականացման արդյունքները և իրականացնել մոնիթորինգ,
- կազմել Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունները,
- ուսումնասիրել և ըստ անհրաժեշտության կազմել տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի վերաբերյալ,
- մշակել էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականությունը, ծրագրերը և ռազմավարությունները,
- մշակել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պետական բյուջետային ծրագրերի ոչ ֆինանսական արդյունքային կատարողական ցուցանիշները,
- կազմել շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ հանրամատչելի ուսումնադաստիարակչական նյութեր, մշակել էկոլոգիական ուղղվածություն ունեցող և կրթադաստիարակչական ծրագրեր,
- մշակել կոնկրետ իրավիճակից բխող իրավական ակտերի նախագծեր, ներկայացնել առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր,
- իր գործառույթների շրջանակներում սահմանված կարգով և համապատասխան ժամկետներում Նախարարության ստորաբաժանումներին և համակարգի կառույցներին տրամադրել մեթոդական խորհրդատվություն,
- Վարչության պետի քննարկմանը ներկայացնել իր առջև դրված խնդիրների լուծումը, հստակեցնել ակնկալվող արդյունքի ձևաչափը,

- իր գործառույթների շրջանակներում վերլուծել Վարչության աշխատանքների տարեկան արդյունքները և պլանավորել կատարման ենթակա աշխատանքները՝ ըստ առաջնահերթությունների և ժամանակացույցի,
- կազմել և Վարչության պետին ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

5) Հրամանով հաստատված 316-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ռազմավարական քաղաքականության վարչության գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-32.2-Մ2-6) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլխի **«2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1) իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի՝ ընդերքի, հողերի, ջրերի, մթնոլորտի, կենդանական ու բուսական աշխարհի, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառների կայուն կառավարման, պահպանության, պաշտպանության և բնական պաշարների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) ողջամիտ օգտագործման ու վերարտադրության, կլիմայի փոփոխության հիմնախնդիրների լուծմանն ուղղված, ներառյալ՝ հարմարվողականության, ոլորտի քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման գործընթացը և վերլուծական աշխատանքները,

2) իրականացնում է շրջակա միջավայրի ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման գործընթացները, վերլուծական աշխատանքները՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով,

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման աշխատանքները,

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի շրջակա միջավայրի ոլորտի միջոցառումների սահմանված կարգով մշակման և իրականացման գործընթացները և վերլուծության աշխատանքները,

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական ծրագրերի՝ շրջակա միջավայրին վերաբերող բաժինների, ռազմավարական ուղղությունների մշակման աշխատանքները,

6) իրականացնում է ռազմավարական ծրագրերի իրականացումն ապահովող միջոցառումների կատարման գծով (մասով) Նախարարության ստորաբաժանումներից, ենթակա կազմակերպություններից ու հիմնարկներից ստացված տեղեկատվության, միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա

սահմանված կարգով պատկան մարմիններ ներկայացվող հաշվետվությունների, ամփոփագրերի, զեկույցների և տեղեկանքների կազմման (նախապատրաստման) և տրամադրման գործընթացը,

7) իրականացնում է Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան ծրագրերի իրականացման արդյունքների գնահատումը և մոնիթորինգը,

8) իրականացնում է Նախարարության գործունեության տարեկան և ընթացիկ գործունեության ամփոփ հաշվետվությունների կազմումը,

9) մասնակցում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացին,

10) իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը,

11) իրականացնում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման և այդ ծրագրերի ամփոփման աշխատանքները,

12) իրականացնում է շրջակա միջավայրի ծրագրերի մշակման և իրականացման ընթացակարգերի, շրջակա միջավայրի պահպանության ոլորտի ծախսերի կառավարման լավագույն (արդիական) համակարգերի ներդրման գծով առաջարկների մշակման աշխատանքները,

13) իրականացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի վիճակագրական զեկույցների տնտեսագիտական և ֆինանսական բաղադրիչների (բաժինների) նախագծերի նախապատրաստումը,

14) իրականացնում է Նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ ռազմավարական փաստաթղթերի տնտեսագիտական վերլուծություն,

15) իրականացնում է էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների մշակման գործընթացը,

16) իրականացնում է շրջակա միջավայրին առնչվող հարցերի վերաբերյալ հանրամատչելի ուսումնադաստիարակչական նյութերի մշակման աշխատանքները,

17) իրականացնում է կրթական համակարգում և այլ հաստատություններում էկոլոգիական ուղղվածություն ունեցող և կրթադաստիարակչական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների մշակման աշխատանքները,

18) իրականացնում է Վարչության իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակում,

19) իրականացնում է այլ մարմինների կողմից մշակված և նախարարություն համաձայնեցման ներկայացված, Նախարարության այլ ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի վերաբերյալ առաջարկությունների կազմում՝ Վարչության իրավասությունների շրջանակներում,

20) մասնակցում է կանաչ տնտեսության խթանմանն ուղղված քաղաքականության մշակման ու իրականացման աշխատանքներին՝ Նախարարության իրավասությունների շրջանակում,

21) մասնակցում է շրջակա միջավայրի ծրագրերի և ծախսերի ֆինանսավորման (ներառյալ՝ ապահովագրական, հասցեական օգտագործման և այլ հիմնադրամների միջոցով, բնապահպանական միջազգային կոնվենցիաներով և համաձայնագրերով նախատեսված) մեխանիզմների ներդրման գծով առաջարկությունների մշակման աշխատանքներին,

22) մասնակցում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտում ծախսերի հաշվարկման և դասակարգման, տեղեկատվության պարբերական հավաքագրման համակարգի ներդրման և կատարելագործման գծով առաջարկների մշակման աշխատանքներին,

23) մասնակցում է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի՝ շրջակա միջավայրի բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքների համակարգման և եզրակացությունների տրամադրման գործընթացին,

24) մասնակցում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացը կարգավորող իրավական նախագծերի մշակման աշխատանքներին:

**Իրավունքները՝**

- ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինների մշակման վերաբերյալ,
- ստանալ տեղեկատվություն Նախարարության համակարգի պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների գործունեության տարեկան աշխատանքային ծրագրերի արդյունքների, ինչպես նաև տարեկան և ընթացիկ գործունեության վերաբերյալ,
- կազմել և Վարչության պետի քննարկմանը ներկայացնել իր գործառույթներից բխող շրջակա միջավայրի պահպանության ոլորտի քաղաքականությանն ուղղված մշակված իրավական ակտերի նախագծերը,
- Վարչության պետին տրամադրել և քննարկել էկոլոգիական գիտության և դաստիարակության քաղաքականության, ծրագրերի և ռազմավարությունների մշակման, հանրամատչելի ուսումնադաստիարակչական նյութերի, էկոլոգիական ուղղվածություն ունեցող և կրթադաստիարակչական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունները,
- Նախարարության ստորաբաժանումներից ստանալ տեղեկատվություն հակակոռուպցիոն ծրագրերից բխող աշխատանքների իրականացման վերաբերյալ, ինչպես նաև նոր կազմվող հակակոռուպցիոն ծրագրերի ոլորտին վերաբերող մասերի մշակման վերաբերյալ,

- մասնակցել Վարչության կողմից կազմակերպվող աշխատանքային քննարկումներին և խորհրդակցություններին,
- աշխատանքային կարգով քննարկել իր լիազորությունների շրջանակներում Վարչության գործառույթներից բխող հարցերն ու խնդիրները շահագրգիռ կողմերի հետ,
- Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ իր գործառույթներից բխող աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու վերաբերյալ:

**Պարտականությունները՝**

- ամփոփել և վերլուծել շրջակա միջավայրի պահպանության ու բնական ռեսուրսների բանական օգտագործման բնագավառներում պետական քաղաքականության և ռազմավարական ծրագրերի մշակման, կազմման, անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման աշխատանքները,
- վերլուծել բնագավառի պետական քաղաքականության ծրագրերի ու ռազմավարությունների մշակման և ամփոփման աշխատանքները, իրականացնել արդյունքների գնահատում,
- մշակել Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի շրջակա միջավայրի ոլորտին վերաբերող բաժինները, Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագիրը,
- ուսումնասիրել և ըստ անհրաժեշտության կազմել տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի վերաբերյալ,
- կազմել այլ մարմինների կողմից մշակված և նախարարություն համաձայնեցմանը ներկայացված, Նախարարության այլ ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ,
- Վարչության պետի քննարկմանը ներկայացնել իր առջև դրված խնդիրների լուծումը, հստակեցնել ակնկալվող արդյունքի ծավալը,
- սահմանված կարգով և ժամկետում կազմել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, զեկուցագրերի և այլ գրությունների նախագծեր,
- կազմել և Վարչության պետին ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

11)Հրամանով հաստատված 364-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության պետի (ծածկագիր՝ 15-33.2-Ղ3-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի՝

**«1.2. Ենթակա և հաշվետու է»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վարչության պետը հաշվետու և անմիջական ենթակա է Նախարարին, անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:»:

**«1.3. Ենթակա և հաշվետու պաշտոններ»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են վարչության բաժինների պետերը:»

**«1.4. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ. «Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության բաժինների պետերից մեկը:»

**«2. Պաշտոնի բնութագիրը»** գլխի **«2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2.Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1. կազմակերպում է Նախարարության հաշվապահական հաշվառման վարումը, համակարգի ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը և գնահատումը, ինչպես նաև Նախարարության ենթակայության կազմակերպություններին հանրային հատվածի հաշվապահական հաշվառման հետ կապված մեթոդական օգնության ցուցաբերումը և օժանդակումը,
2. կազմակերպում է Նախարարության, պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ընկերությունների ու հիմնարկների եռամսյակային և տարեկան հաշվապահական հաշվետվությունների ընդունումը, վերլուծումը, և ներկայացում է ֆինանսների նախարարություն,
3. կազմակերպում է բյուջետային ծրագրերով նախարարության կնքած պայմանագրերով և դրանցով ստանձնած պարտավորությունների ֆինանսավորումը,
4. կազմակերպում է Նախարարության աշխատողների աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումներին ուղղվող միջոցների հաշվարկը,
5. կազմակերպում է մասնակցությունը միջնաժամկետ ծախսային ծրագրերի և բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման գործընթացին,
6. կազմակերպում է Նախարարության համակարգի ֆինանսական գծով պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրումը, ամփոփումը, ամփոփ հաշվետվության կազմումը և ներկայացումը,
7. կազմակերպում է Նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ մասնագիտական կարծիքի տրամադրումը, գրությունների պատրաստումը,
8. կազմակերպում է կանոնադրությամբ Վարչությանը վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի և նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրությունը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը,
9. կազմակերպում է Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի և բյուջետային ծրագրերի իրականացման կազմակերպումը, ծրագրավորումը և բնականոն ֆինանսավորման ապահովումը, կնքված ֆինանսական պայմանա

10. գրերի դրույթների կատարման ընթացքի նկատմամբ նախնական հսկողության իրականացումը և արդյունքների ամփոփումը,
11. կազմակերպում է Նախարարության համակարգի կազմակերպությունների ֆինանսավորումը և համաձայն գործող օրենսդրության գնումների գործընթացի համակարգումը և օժանդակումը, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը և արդյունքների մասին առաջարկությունների ներկայացումը, գնման գործընթացների վերաբերյալ ստացված բողոքների քննարկումը, դրանց հիման վրա ուսումնասիրությունների իրականացումը և այդ կազմակերպությունների կողմից կատարման ենթակա որոշումների, նախագծերի ներկայացումը, մասնակցությունը ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությանը և գնահատմանը,
12. կազմակերպում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա բնական միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացի սահմանված կարգով ձևավորման գործընթացի համակարգումը,
13. կազմակերպում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում բյուջետային գործընթացի ապահովումը՝ այդ թվում միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ներառյալ առաջիկա բյուջետային տարվա պետական բյուջեի) Նախարարության ամփոփ հայտերի մշակումը և ներկայացումը,
14. կազմակերպում է առաջիկա տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական տարբերակում ներառված բյուջետային ծրագրերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովներում քննարկման գործընթացը,
15. կազմակերպում է բյուջետային գործընթացի շրջանակներում, սահմանված կարգով, միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային հայտերի շուրջ ոլորտային շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ քննարկումների գործընթացը,
16. կազմակերպում է բյուջետային մուտքերի, այդ թվում՝ բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումային ծավալների հաշվարկումը և ներկայացումը, ինչպես նաև փաստացի մուտքերի վերլուծության ապահովումը,
17. կազմակերպում է օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհների օգտագործման մասին կանխատեսումների կազմման գործընթացի համակարգումը,
18. կազմակերպում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման և այդ ծրագրերի ամփոփման գործընթացին մասնակցությունը,

19. կազմակերպում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ֆինանսավորման համաձայնեցման գործընթացը,
20. կազմակերպում է տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացը,
21. կազմակերպում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և հանրապետական գործադիր մարմինների համաձայնեցման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալների ստեղծումը և մասնագիտական կարծիքների տրամադրման ապահովումը,
22. կազմակերպում է Վարչության իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակում և Նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրումը,
23. Վարչության լիազորությունների շրջանակում կազմակերպում է իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակումը,
24. ապահովում է Նախարարությանը սպասարկող տրանսպորտային միջոցների նորոգման, վառելանյութի և քսայուղերի հայտերի ներկայացման, տրանսպորտային միջոցների տեխնիկական զննման, ապահովագրության, ոստիկանության հաշվառման բաժնում հաշվառման, դուրս գրման աշխատանքների իրականացումը և տրանսպորտային միջոցներին վերաբերող հաշվետվությունների կազմումը,
25. կազմակերպում է Նախարարությանը տնտեսական ապրանքներով և կոմունալ ծառայություններով ապահովելու նպատակով հայտերի, գնման տեխնիկական բնութագրերի կազմումը և կնքված պայմանագրերի շրջանակներում դրանց ստացումը,
26. կազմակերպում է Նախարարությանը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով հատկացված էլեկտրաէներգիայի, ջրմուղ-կոյուղու և կապի ծախսերի սահմանաքանակների բաշխումը և հսկումը,
27. կազմակերպում է Նախարարության ներքին ցանցի աշխատանքները,
28. կազմակերպում է Նախարարության համակարգչային տեխնիկայի ծրագրային սպասարկման և շահագործման աշխատանքները,
29. կազմակերպում է սերվերների կառավարումը, տվյալների արխիվացումը և համացանցային կապի ապահովումը,
30. կազմակերպում է Վարչության աշխատակիցների աշխատանքային ծրագրերի ու աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

**Իրավունքները՝**

- Նախարարության և համակարգի կազմակերպություններից, ընկերություններից, հիմնարկներից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն, նյութեր,
- կազմակերպել քննարկումներ նախարարության, համակարգի կազմակերպությունների, ընկերությունների, հիմնարկների հաշվապահական հաշվառում վարող ստորաբաժանման աշխատակիցների հետ,

• սահմանված կարգով բյուջետային գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով՝ ստանալ Նախարարության ստորաբաժանումների, համակարգի կազմակերպությունների ու ենթակա մարմինների կողմից ծրագրային բյուջետավորման հայտերի նախագծերը,

• կազմակերպել գնման ընթացակարգը և վերահսկել այդ գործըթացին առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին,

• սահմանված կարգով տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացի ապահովման նպատակով ստանալ տեղեկատվություն,

• Վարչության բնականոն աշխատանքը կազմակերպելու համար պահանջել սկզբնական հաշվառման փաստաթղթեր, տեղեկատվություն:

**Պարտականությունները՝**

• սահմանված ժամկետում տրամադրել հաշվետվությունների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն համապատասխան գերատեսչություններին,

• վերլուծել համակարգի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեությունը,

• վերահսկել հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքները, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը,

• վերահսկել Նախարարության և համակարգի կազմակերպություններում գնումների գործընթացը,

• հետևել բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա բնական միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացին ուղղված աշխատանքներին,

• վերահսկել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում բյուջետային գործընթացի հետ կապված աշխատանքները և Նախարարության համակարգի բյուջետային հայտերի կազմման գործընթացը,

• վերահսկել առաջիկա տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական տարբերակում ներառված բյուջետային ծրագրերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովներում քննարկման գործընթացը,

• աջակցել բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման և այդ ծրագրերի ամփոփման գործընթացին,

• վերահսկել տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացը,

| |
|---|
| • վերահսկել Նախարարության տրանսպորտային միջոցների անխափան աշխատանքի, աշխատակիցներին ժամանակակից սարքավորումներով և նյութատեխնիկական միջոցներով սահմանված ժամկետներում ապահովելու գործընթացը,<br>• վերահսկել Նախարարության տնտեսական և նյութական պաշարների սահմանված ժամկետներում ապահովման գործընթացը,<br>• հետևել համակարգչային ցանցի, տեղեկատվական համակարգերի շահագործման աշխատանքներին,<br>• կազմակերպել Նախարարության պաշտոնական կայքի կառավարումը և սպասարկումը,<br>• վերահսկել սերվերների կառավարման, տվյալների արխիվացման և համացանցային կապի ապահովման աշխատանքները: |

12) Հրամանով հաստատված 380-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի պետի (ծածկագիր՝ 15-33.2-Ղ4-4) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. ամբողջ տեքստում «ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերը փոխարինել «բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերով,

2. **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլխի **«2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

| |
|---|
| **2. Պաշտոնի բնութագիրը**<br><br>**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**<br>1. ապահովում է Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի և բյուջետային ծրագրերի իրականացումը, ծրագրավորումը և բնականոն ֆինանսավորումը, կնքված ֆինանսական պայմանագրերի դրույթների կատարման ընթացքի նկատմամբ նախնական հսկողության իրականացումը և արդյունքների ամփոփումը,<br>2. ապահովում է Նախարարության համակարգի կազմակերպությունների ֆինանսավորումը և համաձայն գործող օրենսդրության գնումների գործընթացի համակարգումը և օժանդակումը, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին առաջարկությունների ներկայացումը, գնման գործընթացների վերաբերյալ ստացված բողոքների քննարկումը, դրանց հիման վրա ուսումնասիրությունների կատարումը և այդ կազմակերպությունների կողմից կատարման ենթակա որոշումների, նախագծերի ներկայացումը, մասնակցությունը ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությանը և գնահատմանը, |

3. ապահովում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա բնական միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացի սահմանված կարգով ձևավորման գործընթացի համակարգումը,
4. ապահովում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում բյուջետային գործընթացը՝ այդ թվում միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ներառյալ առաջիկա բյուջետային տարվա պետական բյուջեի) Նախարարության ամփոփ հայտերի մշակումը և ներկայացումը,
5. ապահովում է առաջիկա տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական տարբերակում ներառված բյուջետային ծրագրերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովներում քննարկման գործընթացը,
6. ապահովում է բյուջետային գործընթացի շրջանակներում, սահմանված կարգով, միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային հայտերի շուրջ ոլորտային շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ քննարկումների գործընթացը,
7. ապահովում է բյուջետային մուտքերի, այդ թվում՝ բյուջետային եկամուտների առանձին եկամտատեսակներից և ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններից մուտքերի կանխատեսումային ծավալների հաշվարկումը և ներկայացումը, ինչպես նաև փաստացի մուտքերի վերլուծությունը,
8. ապահովում է օտարերկրյա պետությունների ու միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ անձանց կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված դրամաշնորհների օգտագործման մասին կանխատեսումների կազմման գործընթացի համակարգումը,
9. ապահովում է բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման և այդ ծրագրերի ամփոփման գործընթացին մասնակցությունը,
10. ապահովում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով ներկայացված բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման ֆինանսավորման համաձայնեցման գործընթացը,
11. ապահովում է տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացը,
12. ապահովում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և հանրապետական գործադիր մարմինների համաձայնեցման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալների ստեղծումը և մասնագիտական կարծիքների տրամադրումը,
13. ապահովում է Բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակումը և Նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրումը,

14. ապահովում է Բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակումը,
15. ապահովում է Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը,
16. ապահովում է Բաժնին վերապահված իրավասությունների սահմաններում Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի, նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրման և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմման գործընթացը:

**Իրավունքները՝**

- սահմանված կարգով պատասխանատու ստորաբաժանումներից պահանջել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրեր կնքելու համար գնման հայտերը,
- Բաժնի մասնագետներից պահանջել գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանության ապահովում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին, գնման պայմանագրերի նախագծեր,
- ստանալ տեղեկատվություն սահմանված կարգով տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացի ապահովման նպատակով,
- սահմանված կարգով բյուջետային գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով՝ ստանալ Նախարարության ստորաբաժանումների, համակարգի կազմակերպությունների ու ենթակա մարմինների կողմից ծրագրային բյուջետավորման հայտերի նախագծերը,
- Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ՝ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար,
- Բաժնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված հրավիրել խորհրդակցություն՝ դրանց մասնակից դարձնելով համապատասխան մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների:

**Պարտականությունները՝**

- ամփոփել հայտերը, գնման պայմանագրերը ներկայացնել հաստատման, ամփոփել կնքված ֆինանսական պայմանագրերի արդյունքները,
- Վերլուծել Նախարարության համակարգի կազմակերպություններում գնումների գործընթացը, Վարչության պետին ներկայացնել առաջարկություններ, քննարկել բողոքները, վերլուծել և գնահատել ֆինանսատնտեսական գործունեությունը,
- ամփոփել և Վարչության պետին ներկայացնել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերը, վերլուծել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերի

հաշվետվությունները, ներակայացնել ֆինանսական ցուցանիշների հաշվետվության վերաբերյալ վերջնական որոշման առաջարկը, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել նախահաշիվները, պայմանագրերը,

- ամփոփել բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման, շրջակա բնական միջավայրի և կլիմայի փոփոխության բնագավառում բյուջետային գործընթացի սահմանված կարգով ձևավորման գործընթացը,
- ամփոփել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում բյուջետային գործընթացի հետ կապված աշխատանքները՝ ապահովելով Նախարարության համակարգի բյուջետային հայտերի կազմման գործընթացը,
- ամփոփել առաջիկա տարվա պետական բյուջեի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական տարբերակում ներառված բյուջետային ծրագրերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գլխադասային հանձնաժողովներում քննարկման գործընթացը,
- ամփոփել բնական ռեսուրսների (բացառությամբ օգտակար հանածոների պաշարների) կառավարման և շրջակա բնական միջավայրի պահպանության բնագավառում պետական ծրագրերի ոչ ֆինանսական ծրագրային ցուցանիշների մշակման գործընթացին մասնակցության աշխատանքները,
- ամփոփել տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացը,
- վերլուծել համակարգի կազմակերպությունների եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի, գնումների պլանները և տրամադրել կարծիք,
- ամփոփել Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և հանրապետական գործադիր մարմինների համաձայնեցման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալների ստեղծման և մասնագիտական կարծիքների տրամադրման գործընթացը.
- ամփոփել Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները,
- հետևել առաջարկությունների, տեղեկանքների, հաշվետվությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ գրությունների նախապատրաստման աշխատանքներին,
- ամփոփել նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերի ուսումնասիրության գործընթացը և ըստ անհրաժեշտության դրանց վերաբերյալ տեղեկանքների կազմումը:

13) Հրամանով հաստատված 381-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-14) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. ամբողջ տեքստում «ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերը փոխարինել «բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերով,

2. **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլխի **«2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

| |
|---|
| **2. Պաշտոնի բնութագիրը** |
| **2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.** |
| 1. իրականացնում է Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի և բյուջետային ծրագրերի իրականացման կազմակերպումը, ծրագրավորումը և բնականոն ֆինանսավորման ապահովումը, կնքված ֆինանսական պայմանագրերի դրույթների կատարման ընթացքի նկատմամբ նախնական հսկողության իրականացումը և արդյունքների ամփոփումը, |
| 2. իրականացնում է Նախարարության համակարգի կազմակերպությունների ֆինանսավորման ապահովումը և համաձայն գործող օրենսդրության գնումների գործընթացի համակարգումը և օժանդակումը, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին առաջարկությունների ներկայացումը, գնման գործընթացների վերաբերյալ ստացված բողոքների քննարկումը, դրանց հիման վրա ուսումնասիրությունների կատարումը և այդ կազմակերպությունների կողմից կատարման ենթակա որոշումների, նախագծերի ներկայացումը, մասնակցում է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությանը և գնահատմանը, |
| 3. մասնակցում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում բյուջետային գործընթացի ապահովման՝ այդ թվում միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ներառյալ առաջիկա բյուջետային տարվա պետական բյուջեի) Նախարարության ամփոփ հայտերի մշակման և ներկայացման աշխատանքներին, |
| 4. իրականացնում է տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացը, |
| 5. իրականացնում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և հանրապետական գործադիր մարմինների համաձայնեցման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալների ստեղծումը և մասնագիտական կարծիքների տրամադրումը, |
| 6. իրականացնում է Բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակման և Նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրման աշխատանքները, |
| 7. իրականացնում է Բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները, |

8. իրականացնում է Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

**Իրավունքները՝**

- սահմանված կարգով պատասխանատու ստորաբաժանումներից պահանջել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրեր կնքելու համար գնման հայտերը,
- սահմանված կարգով բյուջետային գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով՝ ստանալ Նախարարության ստորաբաժանումների, համակարգի կազմակերպությունների ու ենթակա մարմինների կողմից ծրագրային բյուջետավորման հայտերի նախագծերը,
- հավաքագրել տեղեկատվություն սահմանված կարգով տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացի ապահովման նպատակով,
- սահմանված ժամկետներում Բաժնի գործառույթների իրականացման շրջանակներում հավաքագրել տեղեկատվություն և հաշվետվություն,
- Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար,
- իր լիազորությունների շրջանակներում, սահմանված ձևին համապատասխան համակարգի կազմակերպություններից հավաքագրել տեղեկատվություն:

**Պարտականությունները՝**

- վերլուծել հայտերը, նախապատրաստել գնման պայմանագրերը և ներկայացնել բաժնի պետին,
- ամփոփել և բաժնի պետին ներկայացնել Բաժնի կնքված ֆինանսական պայմանագրերը, կազմակերպել գնման մրցույթները, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել նախահաշիվները, պայմանագրերը,
- աջակցել Նախարարության համակարգի կազմակերպություններում գնումների գործընթացի օժանդակման և համակարգման գործընթացին,
- նախապատրաստել և Բաժնի պետին ներկայացնել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերը, ուսումնասիրել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերի հաշվետվությունները, ֆինանսական ցուցանիշների հաշվետվության վերաբերյալ վերջնական որոշման առաջարկը ներկայացնել Բաժնի պետին, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել նախահաշիվները, պայմանագրերը,
- տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով նախապատրաստել պայմանագրերը և ներկայացնել բաժնի պետին,
- աջակցել բյուջեների պլանավորման աշխատանքներին, կազմել տվյալ տարվա գնումների անվանացանկը,

- ուսումնասիրել և վերլուծել համակարգի կազմակերպությունների եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, գնումների պլանները, տրամադրել կարծիք բաժնի պետին,
- նախապատրաստել նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր, ստեղծել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալներ, տրամադրել մասնագիտական կարծիքներ,
- կազմել Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները,
- նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- ուսումնասիրել նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերը և դրանց վերաբերյալ կազմել տեղեկանքներ:

14) Հրամանով հաստատված 382-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-15) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. ամբողջ տեքստում «ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերը փոխարինել «բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերով,

2. «**2. Պաշտոնի բնութագիրը**» գլխի «**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները**» կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1. իրականացնում է Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի և բյուջետային ծրագրերի իրականացման կազմակերպումը, ծրագրավորումը և բնականոն ֆինանսավորման ապահովումը, կնքված ֆինանսական պայմանագրերի դրույթների կատարման ընթացքի նկատմամբ նախնական հսկողության իրականացումը և արդյունքների ամփոփումը,
2. իրականացնում է Նախարարության համակարգի կազմակերպությունների ֆինանսավորման ապահովումը և համաձայն գործող օրենսդրության գնումների գործընթացի համակարգումը և օժանդակումը, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին առաջարկությունների ներկայացումը, գնման գործընթացների վերաբերյալ ստացված բողոքների քննարկումը, դրանց հիման

վրա ուսումնասիրությունների կատարումը և այդ կազմակերպությունների կողմից կատարման ենթակա որոշումների, նախագծերի ներկայացումը, մասնակցում է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությանը և գնահատմանը,

3. մասնակցում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում բյուջետային գործընթացի ապահովման՝ այդ թվում միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ներառյալ առաջիկա բյուջետային տարվա պետական բյուջեի) Նախարարության ամփոփ հայտերի մշակման և ներկայացման աշխատանքներին,
4. իրականացնում է տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացը,
5. իրականացնում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և հանրապետական գործադիր մարմինների համաձայնեցման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալների ստեղծումը և մասնագիտական կարծիքների տրամադրումը,
6. իրականացնում է Բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակման և Նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրման աշխատանքները,
7. իրականացնում է Բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները,
8. իրականացնում է Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

**Իրավունքները՝**

- սահմանված կարգով պատասխանատու ստորաբաժանումներից պահանջել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրեր կնքելու համար գնման հայտերը,
- սահմանված կարգով բյուջետային գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով՝ ստանալ Նախարարության ստորաբաժանումների, համակարգի կազմակերպությունների ու ենթակա մարմինների կողմից ծրագրային բյուջետավորման հայտերի նախագծերը,
- հավաքագրել տեղեկատվություն սահմանված կարգով տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացի ապահովման նպատակով,
- սահմանված ժամկետներում Բաժնի գործառույթների իրականացման շրջանակներում հավաքագրել տեղեկատվություն և հաշվետվություն,
- Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար,

- իր լիազորությունների շրջանակներում, սահմանված ձևին համապատասխան համակարգի կազմակերպություններից հավաքագրել տեղեկատվություն:

**Պարտականությունները՝**

- վերլուծել հայտերը, նախապատրաստել գնման պայմանագրերը և ներկայացնել բաժնի պետին
- ամփոփել և բաժնի պետին ներկայացնել Բաժնի կնքված ֆինանսական պայմանագրերը, կազմակերպել գնման մրցույթները, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել նախահաշիվները, պայմանագրերը ,
- աջակցել Նախարարության համակարգի կազմակերպություններում գնումների գործընթացի օժանդակման և համակարգման գործընթացին,
- նախապատրաստել և Բաժնի պետին ներկայացնել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերը, ուսումնասիրել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերի հաշվետվությունները, ֆինանսական ցուցանիշների հաշվետվության վերաբերյալ վերջնական որոշման առաջարկը ներկայացնել Բաժնի պետին, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել նախահաշիվները, պայմանագրերը,
- տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով նախապատրաստել պայմանագրերը և ներկայացնել բաժնի պետին,
- աջակցել բյուջեների պլանավորման աշխատանքներին, կազմել տվյալ տարվա գնումների անվանացանկը,
- ուսումնասիրել և վերլուծել համակարգի կազմակերպությունների եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, գնումների պլանները, տրամադրել կարծիք բաժնի պետին,
- նախապատրաստել նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր, ստեղծել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալներ, տրամադրել մասնագիտական կարծիքներ,
- կազմել Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները,
- նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- ուսումնասիրել նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերը և դրանց վերաբերյալ կազմել տեղեկանքներ:

15) Հրամանով հաստատված 444-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-19) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. ամբողջ տեքստում «ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերը փոխարինել «բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերով,

2. **«2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1. իրականացնում է Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի և բյուջետային ծրագրերի իրականացման կազմակերպումը, ծրագրավորումը և բնականոն ֆինանսավորման ապահովումը, կնքված ֆինանսական պայմանագրերի դրույթների կատարման ընթացքի նկատմամբ նախնական հսկողության իրականացումը և արդյունքների ամփոփումը,
2. իրականացնում է Նախարարության համակարգի կազմակերպությունների ֆինանսավորման ապահովումը և համաձայն գործող օրենսդրության գնումների գործընթացի համակարգումը և օժանդակումը, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը և արդյունքների մասին առաջարկությունների ներկայացումը, գնման գործընթացների վերաբերյալ ստացված բողոքների քննարկումը, դրանց հիման վրա ուսումնասիրությունների կատարումը և այդ կազմակերպությունների կողմից կատարման ենթակա որոշումների, նախագծերի ներկայացումը, մասնակցում է ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությանը և գնահատմանը,
3. մասնակցում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում բյուջետային գործընթացի ապահովման՝ այդ թվում միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ներառյալ առաջիկա բյուջետային տարվա պետական բյուջեի) Նախարարության ամփոփ հայտերի մշակման և ներկայացման աշխատանքներին,
4. իրականացնում է տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացը,
5. իրականացնում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և հանրապետական գործադիր մարմինների համաձայնեցման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալների ստեղծումը և մասնագիտական կարծիքների տրամադրումը,
6. իրականացնում է Բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակման և Նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրման աշխատանքները,
7. իրականացնում է Բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները,

8. իրականացնում է Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմումը:

**Իրավունքները՝**

- սահմանված կարգով պատասխանատու ստորաբաժանումներից պահանջել ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրեր կնքելու համար գնման հայտերը,
- սահմանված կարգով բյուջետային գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով՝ ստանալ Նախարարության ստորաբաժանումների, համակարգի կազմակերպությունների ու ենթակա մարմինների կողմից ծրագրային բյուջետավորման հայտերի նախագծերը,
- հավաքագրել տեղեկատվություն սահմանված կարգով տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացի ապահովման նպատակով,
- սահմանված ժամկետներում Բաժնի գործառույթների իրականացման շրջանակներում հավաքագրել տեղեկատվություն և հաշվետվություն,
- Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ Բաժնի աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների ներկայացուցիչներ ներգրավելու և աշխատանքային խմբեր կազմավորելու համար,
- իր լիազորությունների շրջանակներում, սահմանված ձևին համապատասխան համակարգի կազմակերպություններից հավաքագրել տեղեկատվություն:

**Պարտականությունները՝**

- վերլուծել հայտերը, նախապատրաստել գնման պայմանագրերը և ներկայացնել բաժնի պետին
- ամփոփել և բաժնի պետին ներկայացնել Բաժնի կնքված ֆինանսական պայմանագրերը, կազմակերպել գնման մրցույթները, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել նախահաշիվները, պայմանագրերը,
- աջակցել Նախարարության համակարգի կազմակերպություններում գնումների գործընթացի օժանդակման և համակարգման գործընթացին,
- նախապատրաստել և Բաժնի պետին ներկայացնել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերը, ուսումնասիրել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերի հաշվետվությունները, ֆինանսական ցուցանիշների հաշվետվության վերաբերյալ վերջնական որոշման առաջարկը ներկայացնել Բաժնի պետին, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել նախահաշիվները, պայմանագրերը,
- տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով նախապատրաստել պայմանագրերը և ներկայացնել բաժնի պետին,
- աջակցել բյուջեների պլանավորման աշխատանքներին, կազմել տվյալ տարվա գնումների անվանացանկը,

- ուսումնասիրել և վերլուծել համակարգի կազմակերպությունների եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, գնումների պլանները, տրամադրել կարծիք բաժնի պետին,
- նախապատրաստել նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, եզրակացություններ, այլ փաստաթղթեր, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումներ և ուղեցույցեր, ստեղծել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալներ, տրամադրել մասնագիտական կարծիքներ,
- կազմել Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները,
- նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- ուսումնասիրել նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերը և դրանց վերաբերյալ կազմել տեղեկանքներ:

16) Հրամանով հաստատված 383-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-33.2-Մ4-8) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. ամբողջ տեքստում «ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերը փոխարինել «բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի» բառերով,

2. **«2. Պաշտոնի բնութագիրը»** գլխի **«2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

**2. Պաշտոնի բնութագիրը**

**2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները.**

1. մասնակցում է Նախարարության և համակարգի կարիքների համար գնումների գործընթացի և բյուջետային ծրագրերի իրականացման կազմակերպման, ծրագրավորման և բնականոն ֆինանսավորման ապահովման, կնքված ֆինանսական պայմանագրերի դրույթների կատարման ընթացքի նկատմամբ նախնական հսկողության իրականացման և արդյունքների ամփոփման աշխատանքներին,
2. մասնակցում է Նախարարության համակարգի կազմակերպությունների ֆինանսավորման ապահովամ և համաձայն գործող օրենսդրության գնումների գործընթացի համակարգման և օժանդակման, գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության և արդյունքների մասին առաջարկությունների ներկայացման, գնման գործընթացների վերաբերյալ ստացված բողոքների քննարկման, դրանց հիման վրա ուսումնասիրությունների կատարման և այդ կազմակերպությունների կողմից կատարման ենթակա որոշումների, նախագծերի ներկայացման աշխատանքներին,

ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության և գնահատման աշխատանքներին,

3. մասնակցում է շրջակա միջավայրի պահպանության բնագավառում բյուջետային գործընթացի ապահովման՝ այդ թվում միջնաժամկետ ծախսային ծրագրերի (ներառյալ առաջիկա բյուջետային տարվա պետական բյուջեի) Նախարարության ամփոփ հայտերի մշակման և ներկայացման աշխատանքներին,
4. մասնակցում է տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացի ապահովման աշխատանքներին,
5. մասնակցում է Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված և հանրապետական գործադիր մարմինների համաձայնեցման ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի համար ֆինանսական նախադրյալների ստեղծման և մասնագիտական կարծիքների տրամադրման ապահովման աշխատանքներին,
6. մասնակցում է Բաժնի իրավասությունների սահմաններում իրավական ակտերի նախագծերի մշակման և Նախարարությանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրման աշխատանքներին,
7. մասնակցում է Բաժնի գործառույթներին վերաբերող իրավական ակտերի կիրառման գործընթացում բացահայտված թերությունների և բացթողումների շտկման նպատակով առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին,
8. մասնակցում է Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների կազմման աշխատանքներին:

**Իրավունքները՝**

- սահմանված կարգով պատասխանատու ստորաբաժանումներից ստանալ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման պայմանագրեր կնքելու համար գնման հայտերը,
- սահմանված կարգով բյուջետային գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով՝ ստանալ Նախարարության ստորաբաժանումների, համակարգի կազմակերպությունների ու ենթակա մարմինների կողմից ծրագրային բյուջետավորման հայտերի նախագծերը,
- մասնակցել Բաժնի գործառույթներին վերաբերող քննարկումներին, խորհրդակցություններին:

**Պարտականությունները՝**

- ուսումնասիրել հայտերի վերլուծությունը, գնման պայմանագրերի նախապատրաստման աշխատանքները,
- վերլուծել և բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ Բաժնի կնքված ֆինանսական պայմանագրերի վերաբերյալ, համապատասխան ծրագրային համակարգ ներմուծել պայմանագրերը,
- աջակցել Նախարարության համակարգի կազմակերպություններում գնումների գործընթացի օժանդակման և համակարգման գործընթացին,

- նախապատրաստել և Բաժնի պետին ներկայացնել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերը, ուսումնասիրել դրամաշնորհի և սուբսիդիայի պայմանագրերի հաշվետվությունները,
- հավաքագրել տեղեկատվություն սահմանված կարգով տվյալ տարվա պետական բյուջեով հաստատված բնապահպանական ծրագրերի իրականացման նպատակով համայնքների հետ օրենքով սահմանված կարգով պայմանագրերի կնքման գործընթացի ապահովման նպատակով,
- հավաքագրել տեղեկատվություն բյուջեների պլանավորման աշխատանքների վերաբերյալ, կազմել տվյալ տարվա գնումների անվանացանկը,
- վերլուծել համակարգի կազմակերպությունների եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվները, գնումների պլանները և Բաժնի պետին տրամադրել կարծիք,
- կազմել Բաժնի աշխատանքային ծրագրերի ու Բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները,
- նախապատրաստել առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ գրություններ,
- ուսումնասիրել նախարարական կոմիտեների օրակարգերում ընդգրկված հարցերը և դրանց վերաբերյալ կազմել տեղեկանքներ:

17) Հրամանով հաստատված 384-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության քարտուղարության պետի (ծածկագիր՝ 15-33.1-Ղ3-1) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի անձնագրի **«1.2. Ենթակա և հաշվետու է»** կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«**1.2. Ենթակա և հաշվետու է**

Քարտուղարության պետը հաշվետու և անմիջական ենթակա է Նախարարին, անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:»:

18) Հրամանի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր ենթակետով.

«454) Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության բյուջետային պլանավորման, ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-21)՝ համաձայն 454 հավելվածի:»:

2. Ուժը կորցրած ճանաչել հրամանի 1-ին կետի 369-րդ ենթակետը և հրամանի 369-րդ հավելվածը.

«369) Շրջակա միջավայրի նախարարության ֆինանսատնտեսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի ավագ հաշվապահ (ծածկագիր՝ 15-33.2-Մ2-12)՝ համաձայն N 369 հավելվածի.»:

Recoverable Signature

X 

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Signed by: ATANESYAN SERGO 4007880425 Ս.ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երևան